ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Էլամիս :

Բարեյուսոյ գլուխը , ուր խիստ շատ զանազան ազգ կենդանեաց կը գտնուի , այս Էլամիս չորքոտանւոյս և կամ լաւ ևս ըսենք երկոտանւոյս բնակութեան երկիրն ալ հոն է : Երկար ատեն մասնաւոր անուն մը չունենալով Ոսփասփուն նապաստակ կ'անուանէին զասիկայ , հնդիկ ճագարի ցեղէն կարծելով . բայց Գիւվիէ երևելի բնապատումը նոր ազգ կը համարի զասիկայ՝ Էլամիս անուանելով . — Շատ նշանաւոր է ասոր կազմուածքը , հասակն ու թանձրու-

թիւնը նապաստակին և ճագարի շատ նման է. ետևի ոտուըները համեմատութեամբ երկայն են, և ոտուըները թռչնոյ ոտքի նման՝ բայց խիստ մեծ, իսկ թաթիկները շատ կարճ են և ձեռքի կը նմանին. պոչը խիստ երկայն և թանձր է. գլուխը նապաստակի գլխոյն նման է, դուրս ցցուած խոշոր սև աչուըներով և երկայն ականջներով։ Կռնակի մորթը մութ դեղին է. իսկ գլխուն վրայ, թիկունքը և մէջքէն վար պոչին կողմը և կողերը մոխրագոյնի հետ խառնուած է. կզակին տակը, կուրծքն ու փորը մաքուր սպիտակ է։ Աչքէն վեր մետաքսանման երկայն մազերով ցանցառ յօնք ունի, և վերին շրթանցը վրայ թանձր և երկայն պեխ։

Ալամիսին ոտուըներուն ու ձեռուըներուն չափազանց անհամեմատութեանը նայելով կը զարմանայ մարդ՝ թէ ինչպէս քալելու շարժելու ատեն նեղութիւն չքաշեր։ Բայց իրաւցընէ թէ որ ինքն ալ ուրիշ չորքոտանեաց պէս չորս ոտքով քալելու ըլլար, շատ նեղութիւն պիտի իմանար. բայց ինքը անոնց պէս չքալեր, այլ բոլոր հնդիկ ճագարին ցեղին և գանկուրուին պէս՝ ցատքռտելով ճամբայ կ'ընէ, և ետևի ոտուըները արագաշարժ և ջղալից ըլլալով՝ մէկ ցատքելով ութը տասը ոտք հեռու տեղ կրնայ նետուիլ։ Իր մկանալից պոչն ալ կ'օգնէ իրեն ցատքելու համար. անոր կրթընելով ոյժ կ'առնէ և զայն յենարանի տեղ կը ծառայեցընէ։ Ցատքելու ատենը գլուխը շիտակ կը բռնէ, և ձեռուըները այնպիսի կերպով մը կուրծքի մազերուն մէջ կ'ամփոփէ, որ աներևոյթ կ'ըլլան։ Նա սովորաբար աս դիրքով կը կենայ. բայց ժայռերէ վեր ելլելու կամ խոր տեղեր իջնալու ատեն՝ առջևի ձեռքերն ալ ոտքի տեղ կը ծառայեցընէ, ինչպէս որ երկոտանիներն ալ այնպիսի ժամանակ ձեռքերնին կը գործածեն ապահովութեան համար։

Իր ուտելիքն է պտուղ, ցորենի հատ, ծիլ, և այլն, զորոնք ձեռքով բերանը կը տանի կապկի պէս. իսկ ծառի դալար ոստեր չկրնար ուտել. և կերակուր ուտելու ատեն ետևի ոտուըները առջևն առած, հանգիստ նստելով կ'ուտէ։ Ալամիսը ճագարներուն պէս գետնափոր տեղուանք կը փորէ և հոն կը բնակի. բայց սաստիկ վախկոտ ըլլալուն շատ արթնութիւն կը բանեցընէ, և իր սուր ճիրանները միշտ պատրաստ կը բռնէ զէնքի տեղ. բնութեամբ հանդարտաբարոյ է և անվնաս։ Ինքը գիշերները միայն զբօսանաց և իր կերակուրը գտնելու կ'ելլէ իր ծակէն, և շատ ալ չհեռանար իր որջէն, ու պզտի շշնկոցի ձայն մը լսածին պէս շտապաւ ծակը կը մտնէ։ Իր կենաց մեծագոյն մասը իր որջին մէջ կ'անցընէ ընտանիքովը մէկտեղ, կամ քնանալով և կամ իր լեցուն համբարանոցներուն մէջի ցորեններուն ծիլերը շտկելով շտկռտելով ըստ եղանակին. ասանկով շատ աշխատանք, հոգ չունի, և օրուան մեծ մասը քունով կ'անցընէ. կռնակը որջին մէկ կողմը տուած կը նստի, ետևի ոտուըները առջև կ'երկնցընէ և գլուխն ալ ինչուան երկու ծնգացը մէջ ծռելով կը խոթէ. ան ատեն երկու ձեռքերովը իր երկայն ականջները բռնած աչքերուն վրայ՝ վարագուրի պէս կը գոցէ, որպէս զի ամենայն կերպով հանգիստ քնանայ, ու ոչ ականջը և ոչ աչքը իրեն անուշ քունին արգելք չըլլան։

ԶԱՓԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՉԱՓԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Տասնորդական դրութիւն չափոյ ու կշռոյ։
(Տես երես 107)

Մեդրը, որ է միութիւն չափու երկայնութեան, է նաև միութիւն չափու մակերևութի, հաստատութեան, ընդունակութեան, կշռոց և արժէից։ Այս հիմնական միութեան ստորաբաժանմունքները տասնորդական կարգաւ կը յառաջատին. այսինքն այնպիսի մասանց վրայ բաժանեալ է այս հիմնական միութիւնը որ տասը տասը անգամ մէկ-